ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Պ Ե Տ

« 13 » ապրիլի 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ
_____ Մ. Անանյան

ԳԲԽ-30/16 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 112-113-րդ կետերով՝ հայտնում ենք հետևյալը.

1. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 02.04.2016թ. ներկայացված բողոքով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ անհայտ կազմակերպությունը (այսուհետ նաև՝ Ահազանգող) 29.02.2016թ. ժամը 10:30-ին ահազանգել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կենտրոն) թեժ գծին և հայտնել, որ ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ահազանգողը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված Ընթացակարգով պահանջվել է ձեռք բերել կրծքանշաններ և մեդալներ, որոնք ձեռք բերելու համար պետք է հայտարարվեր հանդերձանքի ձեռքբերման ընթացակարգ, ոչ թե գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերում:

Ահազանգողը գտնում է, որ խախտվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, ինչի հետևանքով սահմանափակվել է վերջինիս մասնակցության իրավունքը, ուստի խնդրել է Ընթացակարգը հայտարարել չկայացած:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին ստացված ահազանգի վերաբերյալ Պատվիրատուն 01.03.2016թ. թիվ ԴՎԱ/483 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից գրենական պիտույքներ և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների ձեռքբերման մասով համապատասխան հարցում է կատարվել ՀՀ ֆինանսների նախարարի 13.04.2011թ. թիվ 220-Ն հրամանով հաստատված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկի «գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր» անվանատողից, քանի որ ձեռքբերվող ապրանքները՝ պատվոդրոշները, նկարչական և քանդակագործական հավաքածուն, ցուցապաստառները, շախմատը, ՀՀ պետական դրոշները և կրծքանշանները, պատասխանատու ստորաբաժանման կողմից դասվել են որպես գրասենյակային այլ նյութեր՝ դրանց կիրառելիության բնույթից ելնելով:

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության՝ Ընթացակարգի հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքի վրա, այն է՝ ***գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային***, թափանցիկ, հրապարակային և ***ոչ խտրական հիմունքներով կազմակերպում***:

Օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ լիազորված մարմինը հաստատում է շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկը:

Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, որոնց համաձայն՝ չեն կարող սահմանվել ***մասնակցի՝ գնումներին մասնացելու իրավունքի*** և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն նույն հոդվածով

2) ***խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին***:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 13.04.2011թ. թիվ 220-Ն հրամանով հաստատված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկի (այսուհետ նաև՝ Ցանկ) գնման առարկայի 1.3-րդ համարով սահմանված է «Գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր» հանդիսացող ապրանքների ցանկը:

Կենտրոնի կողմից վերոհիշյալ ահազանգի ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 10-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժիններով սահմանվել է «***կրծքանշաններ»*** ապրանքատեսակը, որը ներառված չէ Ցանկի 1.3-րդ համարով սահմանված «Գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր» խմբում:

Վերոհիշյալի արդյունքում, գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջները:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 112-րդ կետի 5-րդ ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ քննարկման արդյունքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտում արձանագրվելու դեպքում, կենտրոնի պետի հանձնարարականով, կենտրոնը բողոքարկման գործընթաց է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում:

Նույն ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ կենտրոնի կողմից բողոքարկման խորհուրդ բողոքը ներկայացվում է գրավոր՝ կենտրոնի պետի կողմից, որում ներառվում են պատվիրատուի անվանումը և գտնվելու վայրը, բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան, կենտրոնի կողմից արձանագրված խախտման առարկան և

պահանջը, ահազանգող անձի պահանջը (եթե նման պահանջ առկա է), բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները, այլ անհրաժեշտ տեղեկություններ.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Կարգի 112-րդ կետի 5-րդ ենթակետի «դ» և «ե» պարբերությամբ՝ Կենտրոնը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է քննության առնել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացրած բողոքը և դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը՝ 10-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով:

Կենտրոնում 2016թ. ապրիլի 7-ին ժամը 14:30-ին տեղի ունեցած ԳԲԽ-30/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի ժամանակ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը պնդել է բողոքով ներկայացրած դիրքորոշումը:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին ստացված ահազանգի վերաբերյալ Պատվիրատուն 01.03.2016թ. թիվ ԴՎԱ/483 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից գրենական պիտույքներ և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը կազմակերպվել է հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 13.04.2011թ. թիվ 220-Ն հրամանով հաստատված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկի «Գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր» անվանատողը, քանի որ ձեռքբերվող ապրանքները՝ պատվոդրոշները, նկարչական և քանդակագործական հավաքածուն, ցուցապաստառները, շախմատը, ՀՀ պետական դրոշները և կրծքանշանները, պատասխանատու ստորաբաժանման կողմից դասվել են որպես գրասենյակային այլ նյութեր՝ դրանց կիրառելիության բնույթից ելնելով:

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության՝ Ընթացակարգի հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ:

Կենտրոնում 2016թ. ապրիլի 7-ին ժամը 14:30-ին տեղի ունեցած ԳԲԽ-30/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը պնդել է իր 01.03.2016թ. թիվ ԴՎԱ/483 գրությամբ հայտնած դիրքորոշումը:

3. ԳԲԽ-30/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-30/16 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ***գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման*** նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 10-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժիններով սահմանվել է ***«կրծքանշաններ»*** ապրանքատեսակը:

3. Ահազանգողը 29.02.2016թ. ժամը 10:30-ին ահազանգել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կենտրոն) թեժ գծին և հայտնել, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ: Ահազանգողը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված Ընթացակարգով պահանջվել է ձեռք բերել կրծքանշաններ և մեդալներ, որոնք ձեռք բերելու համար պետք է հայտարարվեր հանդերձանքի ձեռքբերման ընթացակարգ, ոչ թե գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերում:

Ահազանգողը գտել է, որ խախտվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, ինչի հետևանքով սահմանափակվել է վերջինիս մասնակցության իրավունքը, ուստի խնդրել է Ընթացակարգը հայտարարել չկայացած:

4. Պատվիրատուն ահազանգի վերաբերյալ Կենտրոնում կազմակերպված քննարկման ժամանակ պնդել է իր 01.03.2016թ. թիվ ԴՎԱ/483 գրությամբ հայտնած դիրքորոշումն այն մասին, որ Ընթացակարգի հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ:

5. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ղեկավարվելով Կարգի 112-րդ կետի 5-րդ ենթակետի «դ» և «ե» պարբերությամբ, 02.04.2016թ. բողոքարկման գործընթաց է նախաձեռնել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում՝ խնդրելով դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը՝ 10-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով:

4. ԳԲԽ-30/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով անհայտ կազմակերպության կողմից 29.02.2016թ. ժամը 10:30-ին Կենտրոնի թեժ գծին ներկայացրած ահազանգը, ՀՀ պաշտպանության նախարարության 01.03.2016թ. թիվ ԴՎԱ/483 գրությունը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 13.04.2011թ. թիվ 220-Ն հրամանով հաստատված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկը և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 02.04.2016թ. բողոքը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքի վրա, այն է՝ ***գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային***, թափանցիկ, հրապարակային և ***ոչ խտրական հիմունքներով կազմակերպում***:

Օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ լիազորված մարմինը հաստատում է շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկը:

Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, որոնց համաձայն՝ չեն կարող սահմանվել ***մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի*** և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն նույն հոդվածով

2) ***խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին***:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 13.04.2011թ. թիվ 220-Ն հրամանով հաստատված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկի գնման առարկայի 1.3-րդ համարով սահմանված է «Գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր» հանդիսացող ապրանքների ցանկը:

Այսպիսով, Կենտրոնի կողմից վերոհիշյալ ահազանգի ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ Պատվիրատուի կողմից ***գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման*** նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 10-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժիններով սահմանվել է «***կրծքանշաններ***» ապրանքատեսակը, որը ներառված չէ ՀՀ ֆինանսների նախարարի 13.04.2011թ. թիվ 220-Ն հրամանով հաստատված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկի գնման առարկայի 1.3-րդ համարով սահմանված «Գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր» խմբում, ինչը կարող է հանգեցնել մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանն ու սահմանափակել մասնակիցների մասնակցության իրավունքը: Մասնավորապես, Ընթացակարգի 10-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժիններով սահմանված են ***կրծքանշաններ***, որոնք պետք է ընդգրկված լինեին Ցանկի «**Մեդալների և կրծքանշանների պատրաստում**» խմբում (**ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/7 ծածկագրով**) կամ «**Հանդերձանք և անկողնային պարագաներ**» խմբի «**Աքսեսուարներ և հանդերձանքի այլ պարագաներ**» ենթախմբում (**ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10 ծածկագրով**):

Միաժամանակ, Կենտրոնը հայտնում է, որ նույնաբովանդակ հարցի վերաբերյալ www.gnumner.am կայքում դեռևս 17.02.2016թ. հրապարակվել է Կենտրոնի բացասական եզրակացությունը՝ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3–ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի (տեխնիկական բնութագրի) վերաբերյալ:

Կենտրոնը գտնում է, որ որ Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջները:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 02.04.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել. դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը՝ 10-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-30/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան